

ժայի բարձրացնել և գոչէլ բարբարոսին երեսն ի վեր «Ալ բաւ է», այլ պիտի քենին անոր և ըսեն. «Ուգերուոց աշջեն ինկա՞ զը պաղա-սինք քեզմէ որ ողորմիս այդ խեցերուն». իսկ այդ խօսքին ալ հովը պիտի առնէ տանի...»

Տարաբանիս Հայութին, մի՞ յուսար՝ որպէս զի ակամ մ'աւ աւելի յուսախաբ չըլլաւ. ար-դարութենէ, մարդկային արժանապատութենէ և քրիստոնէական բարոյական սնանկացած ներ-կայ ժամանակին վրայ յոյս մի՞ ունենար. առ այժմ դու քեզի ապրելակերպ մը ճարէ այն եր-կիրներուն մէջ՝ որոնց ազնուասիրու բնակիչները քեզի ապաստանարան մը շնորհեցին, միշտ հաս-նի ժամանակ մը՝ որ այլասերուած ներկայ վար-չութիւնները յեղափոխուին, մինչեւ որ արդա-րութեան ձայնը չեղնառի, մինչն որ քեզ քու բնիկ երկրէդ հանածակուն վարող թշնամի ան-գամ համազուի՝ թէ իրեն նախնիք անենատես ու վասակար քաղաքականութիւն մը զործա-դրեր են՝ կործանելով իրենց իսկ օգասակը պա-տուար մը՝ որ Խուսին Թուրքիայէն կը բաննէր։

Հրատարակութիւնը օճին յաւելուածներ և երկու աշխարհազրական քարտ ալ կը պարու-նակէ՛ հնանեալ կարգով. 1. Ցուցակ մը բնակիչ-ներու թիւերուն 1912ի մէջ խնդրոյ նիթ եղող վեց Վիլյայէրներուն (Կարնոյ, Վանի, Պիթլիսի, Խարբերդի, Տիգրանակերտի, Սեբաստիոյ). — 2. Ցուցակ մը վերոյիշեալ Վիլյայէրներուն և կիրկիոյ բնակիչներուն 1914ի մէջ և ընդհա-նուր հայութեան թուրքիոյ սահմաններուն մէջ (2,026,XXX անձ)։ — 3. Ցուցակ մը Անդրկով-կար (Տփիխ, Քութայիս, Գանձակ, Բաքով, Երեւան, Կարս, Պաթում, Սոխում, Զաքարթալի) բնակիչներուն՝ ըստ այլ և այլ եղեղուու. — 3. (Կրկ.). Ազգաթուական ցուցակ զանազան եղե-րու՝ որ կը զանուիրն Հայ-Համասկանութեան սահմանին մէջ։ — 4. Ազգաթուական ցուցակ քնակչաց Հայաստանի 1914ի մէջ։ — 5. Ազգագրական ցուցակ մերձաւորական թիւով Թուրքիայի, Պարսկաստանի, Ամերիկայի, Խոսիսի և Կուրուքի զանազան կողմերը ցրուած Հայերու 1922ի մէջ (3,004,000)։ — 6. Պետա-կան անձերու յայտարարութիւններ և պաշտօ-նական գրութիւններ՝ ի նպաստ Հայաստանի (էջ 73-108)։ — 7. Հայերու զինուորական աշակ-ցութիւնն ի նպաստ Համաձայնական Պետու-թիւններուն (109-137)։ — Ա. Քարտէզ փոքր Ասիոյ, Բ. Քարտէզ Հայաստանի։

Ցնութիւնս Կմբեմ՝ համառու խօսքով մը։ Այս հրատարակութիւնը կոթող մ'է, որուն վրայ

արձանագրուած են վերջին տասնեակ տարինե-րուս մէջ Հայերու օգոստակար զործունէութիւնն ի նպաստ Համաձայնական Պետութիւններուն, և վերջիններուս անգործութիւնն, մանաւանդ թէ աղիուարեր զործունէութիւնն ի վաս Հայե-լու։

Հ. Ա. Վ. ՏԻՐՈՅԵԼԻՆ

### ԱՅԼԵԼԱՅԼԵԼ:

#### «ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՏՁՅ ՀԱՅՈՑ ՄԷՋ».

ԱՅԼԵԼԱՅԼԵԼ

Այս վերնագրին տակ «ԱԶԳ-ՊԱՀԱԼԻ» ի 1922 Գեկու. 11-14 թիւերուն մէջ շարք մը յօրուածներ հրատարակեց Պ. Ալու-նալեան։ Պատմական տիսակէտով անշուշտ գնահատակի են յարգելի հեղինակին տուած մանրամասն տեղեկութիւնները, սակայն զրախուարար նոյնքան յաջող չէ անոր գրիչը՝ երբ կրօնական ինդիրներ կը շո-շափէ։

Ներուի ըսել որ այդ զրութեանց մէջ մինչ դուրս կը ցայտէ փարելի սէր և զմյալանք բողոքականութեան հանդէպ՝ հոն մէկէն աւելի անգամներ հակասական զաղափարներու աներկիւդ արտայայտու-թիւններ կան, ինչպէս ընթերցողը նշմա-րած պիտի ըլլայ։

Պ. Ալունալեան ջանց մ'ունի տեսնել հայ ժողովրդեան մէջ բողոքականներ՝ նախ քան Լուտեր. ջանց մը բնականօրէն ար-դարացի, ըստ իրեն, քանի որ իր գաւանած բողոքականութեան պատուարեր է. զայդ պիտի ցուցնէ ահա ազնուազրմ ցեղարա-նութիւնը, որուն համեմատ արդի բողո-քականները կը ծագին թոնդրակեցիններէ<sup>1</sup>.

1. Մինչ Պ. Ալունալեան թոնդրակեցինները կը զե-րուատի, Հայ Եկեղեցոյ փառապան դէմք մը նարեկայ գողեցուն, որովհեամաս տատրակը՝ այս մութ դոյներով կը նկարագրէ զանանք. Ալրդ զայսուիկ հօրդդրայր մեր (Ա. Նարեկացի) և վարդապետ մեծա ցննութեամբ ինշիրս արարեան իրաւա զԱլուստեց յատագով, եւ ամ-

և ասոնք՝ իրենց կարգին՝ Պաւղիկիաններէ՝ վերջիններս ալ՝ թէ որ կ'ուզէք՝ Արեորդներէն կամ լաւ ևս Մանիքցիններէն՝ վերջապէս Մանիքցիք ալ զուս հեթանուութենէ, իլր տեսնով որ Պ. Ատանալիքան համեստութեան համար կանգ առեր է Պաւղիկիանց բով այդ ազգարանութեան մէջ, մեզի թողլով զայն գծել և ամրոցացնել մինչև իր նախածնողը:

Աւելին կայ, ինչպէս ինըց գտեր է բողոքականութիւն Հայոց մէջ նախ քան արևմտեանները՝ մենք ալ իրեն յօդուածէն կը սորվինք՝ թէ Թոնդրակցիք հետեւող եղեր են Պօղոս Առաքեալի վարդապետութիւններուն, որոնց նոյն են Պաւղիկեանց, Մանիքցիններու և հուսկ՝ հեթանուութեանց. Հետեւարար Պօղոս Առաքեալի վարդապետութիւնն ալ հեթանուական ծագում կ'ունենայ. Հետեւանց կամ զիւտ՝ որ Պ. Ատանալիքանի զրածներէն առաջ կու գայ. Մինչդեռ մենք ցայժմ Պօղոս Առաքեալը կը ճանչնայինց ծագմամբ հրեայ, ապա Քրիստոսէ ընդունած իր վարդապետութիւնն ու առաքելութիւնը:

Եարունակենց դիտողութիւնիս:

Նախ ինըն հեղինակը կը խոստովանի որ Բիւզանդիոնի կայսրները զՊաւղիկեան-

դըստիք իրեւ զմաստուն նախամարտիք տապալեաց զառապելամատ համբայութիւն անօրինութեաց թուրքակցոց»: — Թուղթ առ Ուշտու կետայ (անտիպ):

1. Պաւղիկեանց Փոքր Հայքին են, բայց չնայ կրնաց վճելք թէ Հայ էին, այլ մասաւանդ հակասակը, վասն զի Պօղոս աղանդապահութեան որդիքը յօնական անուածք Գննեսիոս և Թէոփոռոս կը կընչըն. որով լաւ Կ'ըլլար՝ եթէ Պ. Ատանալիք այդ պատիւը Ցունոց Քողուր, տանի որ անոնց Հայեր Նսիստեւը համար Պօղոս հայ կը զնէն:

Այս մնդրոյն շորէ տես Հ. Բարսեղ Սարգսիանի «Ռասմասիրութիւն Մամիկոն - Պաւղիկեան - Թուրքակցիններու պահենին»: Վենեպէկ. 1933:

2. Բնուր Եւրոպացիք հեղինակներ Պաւղիկեան աղանդը Մանիքցականութեան համ կը նշունչնեն. և արդին Յուկ. Յենեցի «Ընդդիմ Երեսորաքանաց» ճառին մէջ կ'ըսէ. «Ասուսաւ ապս Մամիկոն և Մարկիոն կենդանասցին՝ զիմի այբան ամաց՝ տեսանելով զրեգ իրեան եղայ զար»: (էլ 61 ապ. Վենես. 1833). ուր յայտնի է որ Երեսորաքանները նոյն են Պաւղիկեաններուն զետ:

Ներն «իյրեկ հերետիկոս... հայածեցին»: Անշուշաչներ կընար արդարացնել 1000000 պաւղիկեաններու կոսորումը «սրով ու հրով» այդ կայսերաց ձեռքով. բայց առնոցմէ աւելի բուռն պայքար մը մղեցին լուսաւորչի աթոռին վը այ բազմող հայրապետները. Յովհ. Օձնեցի ախոյան կայսերը: Երին ընթացքը բռներ էր դարեր առաջ Ս. Մասրուպ ալ Արևորդիններու նկատմամբ. Նոյնը նաև զարեր յետոյ Թոնդրակցեցոց դէմ Ոնանիա Նարեկացին՝ ինչպէս վերը տեսանց, և Մագիստրոս, ինչպէս ինցնին կը խոստովանի. «Որոց հրամայեցաք տաւ «պալել զիմունն յարկացն և հրձիգ առ «նել և զինքրեան հանել ի սահմանաց «մերոց. այլ ոչ զոր վասեցաք մարմաւ «կան պատուհասիւր, թէպէտև յօրէնսն «հրամայէ զվերջին պատուհան կընել «նոցա»:

Հոս կ'արձէ նշանակել վերոյիշեալ հաւասութիւններէն մին: Բիւզանդիոնի կայսրներուն բռնւան և անգութ հաւածանցին հետեւանցով Պաւղիկեանց «Փոքր Ասիոյ մէջ ապաստանեցան, ու անգում մին ալ Մահմետականաց հետ միանալով՝ մինչեւ Նիկոմիդիա հարածեցին բիւզանդիան զօրքերը, առեն տեղ Յոյն սուրբերուն պատկերների ու մատունները կործանելով»: ու ընթե այս արարքներէն վերջ կը յաւելու թէ հաւածուած և յեւրոպա արսորուած Պաւղիկեանց «հնի այ ցանեցին եկեղեցական բարեկարգորդուած սերմերը»: Անշուշտ հոն ալ ուրեմն զբրիստոս ու Մահմէտ հաշուեցած են, կողը կողքի կոռւելու Եւրոպայի մէջ եղած կաթողիկէններու դէմ. հոն ալ պատկեր, մասունց սրբած պիտի ըլլան, և անշուշտ այս անգամ Քրիստոս է որ տեղիք տուեր է Մահմէտի, վասն զի Մահմէտի երկիրներուն և տաճարներու մէջ պատկեր, մասունց չկայ: Ահա իրենց բարեկարգութիւնը:

Պ. Ասանալեան լաւ դիտեր է որ աղէտ ներու պահուն է որ բողոքականութիւնը յաջողեր է «զմարդիկ որսալ ի Կեանս». նա կ'ըսէ. «Վերջին 30—40 տարուան մէջ պատահած ճախարդ դիպքերու պատճառաւ ավելի հեղիցիներ իրարու աւելի մօսկան», (լուսաւորչական և հայ բողոքական). բայց ճիշտ յաջորդ տողերուն կը հակասէ ըսելով. «Խակայի բաւարուշական եկեղեցին պաշտօն գետ 100 տարի ասազուած դիրքին վրայ և տակարին»: Լաւագոյն չէր որ ըսէր թէ աղէտներու շրջանը նպաստեց մեզ, որով բաւականաթիւ լուսաւորչականներ ընդունեցանք բողոքականութեան ծոցը. ասով ալ միամտօրէն բողոքականութիւնը կը նախատէ:

Ուրիշ կէտ մը շօշափենք՝ որ հիմնական է և կարեւոր: «Գերմանիոյ բարեկարգութենէ (!) շատ առայ՝ Հայ եկեղեցոյ մէջ, Տարօն գաւառոր գաղտնի, մաքար (յետսահիտ ձեսերու և ատանդորեանց հակառակ) Հայ Պատղիկեաններ կայիին»:

Այս տողերով Պ. Ասանալեան իրականութեան վրայ քող մը ճգելով՝ բարեմիտ ընթերցողը կը մոլորեցնէ: Նա կը ներկայացնէ Պաւղիկեանները՝ իրեք հակառակ հայ եկեղեցւոյն՝ լոկ իրենց ծեսերուն և ատանդորիւններուն համար. մինչքո մենք զիտենք որ Պաւղիկեանք, թողունք ծէսը, հաւատքն և եկեղեցին՝ էր որ վերուվար ըրին: Բաւ է յիշել իրենց մէկ ցանի վարդապետութիւնները՝ ուսկից յայտնի պիտի ըլլայ թէ անոնց հակառակութիւնը հայ եկեղեցւոյն հետ ծէսո՞վ էր թէ դաւանանքով և հաւատքով:

Անոնք կը դաւանէին թէ աշխարհս չար ոգով մը ստեղծագործութիւնն է, որով կ'ուրանային Աստուածաշունչի առաջին գրերն իսկ, կը դնէին երկուութիւնը,

բարի և չար Աստուած, երրորդութեան խորհրդայն մէջ՝ Որդին և Ս. Հոգին փոքր քան զէայր, Քրիստոսի մարմննը երկնքէն է, և ի Մարեմայ անցաւ իրեւ լոկ խոռովակէ մը, որով Մարիամ Աստուածոյ մայր չէ: Կը դնէին մկրտութիւն առանց ջուրի՝ հակառակ Քրիստոսի յայտնի և յստակ վարդապետութեան. Հաղորդութիւն առանց հացի. Ան Ան... Միթէ լոկ ծէս և աւանդութիւն են՝ թէ Աստուած արարիչ է երկնից և երկրի<sup>1</sup>. Թէ մի՛ է Աստուած և իրմէ զատ ուրիշ մէկը չկայ<sup>2</sup>. Թէ Որդին և Ս. Հոգին հաւասար են Հօր<sup>3</sup>. Թէ Քրիստոս «Ճնաւ կատարելապէս ի Մարեմայ Ս. Կուսէն, որով էտո մարմնն, հոգի և միտս և զամհնայն որ ինչ է ի մարդ ճշմարտապէս և ոչ կարծեօց (Հաւատամեց)<sup>4</sup>. Թէ մկրտութիւնը ջրով է<sup>5</sup>. Թէ հաղորդութիւնը հացով<sup>6</sup>, Ան Ան...:

Ուրիշ ընթերցողը կը տեսնէ թէ ո՞րքան հեռու ենք ծիսական և աւանդական հակառակութենէ. խնդիրը ըրիստոնէութիւնն ապականնելու և հեթանոսութիւնը վերականցնելու վրայ էր Պաւղիկեանց քով:

Այս հետեանը մենք չենք որ կը հանենք, արդէն Օձնեցին անոնց դէմ խօսած ատեն ամէն բան կ'ըսէ. յետ զանոնք «Ներախն չարագյնս» (Հակաբրիստոսներ) կոչելու՝ իրենց դաւանանքին և կրօնական համոզմանց մասին համառօտիւ կը զրէ. «որք չարեաց ի չարիս ելին. ի պատ- «կերամարտութենէ ի իսաշամարտութիւն «և ի ըրիստոսատեցութիւն և անտուստ «յահանառածուրիսին և ի յիւապաշտու- «րիւն»<sup>7</sup>. աւելի ի՞նչ կ'ուզէք. այս ամէնը ծէս», աւանդութիւնն են:

«Յետսամուս ծեսերու հակառակ» . . . այդ «յետսամուս»ը կը դարէն առաջ է. չխօսինք հետագայ դարերուն վրայ, կը

1. Ծանչ. Ա. 1. Գործք. Ժ. 24.

2. Եւթ. ի. 2. - Բ. Օրէնք. Լ. Բ. 89. - Եսայի. ԽԶ.

9. - Մարք. Բ. 7. - Ա. Տիմ. Ա. 17.

8. Թուշ. Ժ. 80. - Մաթ. Ի. Բ. 19.

4. Եսայի. Լ. 14. - Մաթ. Ա. 18, 25. - Ղուկ. Բ.

6-7. Գալատ. Դ. 4. Ան.

5. Թուշ. Գ. 5. - Գործ. Ը. 88. Ժ. 47. Ան.

6. Մաթ. Ի. 26. - ՄԿ. Ժ. 22. - Ղ. 4. Ի. Բ. 19.

8. Թուշ. Զ. 52. - Ա. Կորնթ. Ժ. Ա. 28.. Ան.

7. (Ճան) ընդում Պաւղիկեանց. տպ. Վ. Ենեսեակ. 1898. էջ 34.

ցաւինք որ Պ. Առանալեան ծէս, հաւատը իրարու հետ կը շփոթէ. թէպէտ զարմանալու բան ալ չէ, բանի որ բողոքականներու բով հաւատըը մարդուս սրտէն բխած կոյր վատահութիւն մ'է լոկ և անձնական համոզում, մին կը համոզուի (Ա. Հոգոյն ներշնչմամբ, ինչպէս կ'ըսեն իրենք) թէ Զ խորհուրդ կայ Քրիստոսի հաստատուած, և ահա կ'ուսնենաս եկեղեցի մը՝ որ Զ խորհուրդ կը զաւանի. մինչդեռ ուրիշ մը օ, և կ'ըլլայ հինգ, ոմի՝ թէ եկեղեցի կայ. ուրիշ մը անոր գոյութիւնը կ'ուրանայ. այս հաշուով օրին մէկն ալ պիտի լսնեց որ Քրիստոսի գոյութիւնն ալ ուրացեր են. և հուսկ թէ Աստուած չկայ. ահա կատարեալ Պատիկեանութիւն, զոր ցցուց մեզ քիչ առաջ Օձնեցին.

Գանց «յիտամուտ»ին, Զենց հասկրնար, ինչո՞ւ զարմանց կ'ազդէ ծէսերու յիտամուտ ըլլալը. Միթէ Քրիստոս և Առաքեալները ծէ՞ս ցարոցեցին. Աւտարանները և բոլոր նոր կտակարանը միթէ մեզի ծէ՞ս կը սորվեցնեն: Պէտք է գիտնայ Պ. Ասանալեան, թէ ծէսերու ծագութն և հիմը և պատճառը՝ ազգութիւն, լեզու, բարցերն են, Մինչն Պ. զար ծիսական ինդիր կամ զանազանութիւն չկար եկեղեցւոյ մէջ, բանի որ ընդհանրապէս մէկ էր լեզուն. Հոռվմ, Եփսոս, Աղեքսանդրիան, յոյն լեզուն էր որ կ'իշխէր. բաց աստի՛ քրիստոնեանները հրէութեան և հեթանոսութեան ծոցէն զատուելով՝ դեռ առարելական դարերու հասարակաց կեանքին նման կը շարունակէին ապրիլ: Բայց երբ հեթանոսութիւնը քայրայուեցաւ և կերպով մը ամէն քրիստոնեայ իր տունը զարձակ՝ աներկիւզ զաւանելու զԲրիստոսու և անոր կրօնը, այն ատեն էր որ իրաքանչիւր ազգ իր ծէսը ձևացուց: Ազգութեանց չնշուելու վատանզը քրիստոնէութեան հոսանքին մէջ՝ կարծիս կենանացուց լեզուն. այսպէս արդէն Հոռվմ Ցորդ կը թողու յունաքէնը. մեր Հարց ալ Ե, զարուն՝ հայ լեզուով, սեփական ծէսով կը գրէկն հայ ազգութիւնը յունական և ասորական իրացումէն:

Ասկայն լաւ հասկնանք. այդ ամէն ազգերը, հայ, յոյն, լատին, ասորի, հասպէշ, վերջապէս խուժ, զուժ, հանդերձ իրենց սեփական լեզուով, ծէսով, նոյն հաւատըը կը դաւանէին: Զարմանալի չէ ուրեմն ծէսերու փոփոխութեան «յիտամուտ» ըլլալը. մանաւանդ թէ իր բնութեան համեմատ է. ինչ որ մարդկային է փոփոխական է, և ըստ այսմ մեր ծէսին ծագումը, զարգացումը դարեր տեկու է. Դ-Ե, զարէն մինչև ԺԲ-ԺԲ, զար Ասկայն հաւատըը միշտ նոյնն է, անփոփոխ քանի որ աստուածային է. ինչ որ Քրիստոս ըստ Աստուածային Առաքեալները ցարոցեցին, նոյնը շարունակեցին կղեմէսներ, իգնատիսուներ, Պօղիկարպուներ, և անոնց յաջորդները. միշտ նոյն, բանի որ «Եթուու Քրիստոս երէկ և այսօր, նոյն և յափատեան ։ Այս՝ ըստ կաթողիկէից, իսկ բողոքականներուն համեմատ Եթուու Քրիստոս երէկ տարրեր, այսօր տարրեր, և տարրեր յափտեանս. այնքան զանազան ցրիստոսներ և զանազան վարդապետութիւններ՝ որքան բողոքականութեան համախոններ։

Դարձեալ անհաշտ զադափարներու միութեան փորձ մը: Պ. Առանալեան, վերջին յօդուածին մէջ կը դիտէ, որ էշմիածնականց բողոքականներու հետ «միատեղ պայտամունք կատարելու լափ բայնամիտ և ազատախոն չեն երևեար»: Այս հաշուով եթէ օր մը թուրքերը մտածեն բողոքականներն հրաւիրել «միատեղ պաշտամունք կատարելու», յետիններս ուրախութեամբ պիտի ընդունին այդ առաջարկը, բանի որ վերջապէս մահմէտականց ալ զԲրիստոս՝ եթէ ոչ Աստուած՝ գէթ իրը մարգարէ Կ'ընդունին:

Մենք գդրախտարար դեռ այնչափ զարգացում չունենց ըլլրունելու թէ այլաղաւաններ կընան «միատեղ պաշտամունք կատարել ։ ինչ որ Քրիստոս իրը անհնար ըստէ է և երկուց տերանց ծառայել ։ «Ասուուծոյ և Մամոնայի» միանգամայն՝ Պ. Առանալեան հնարաւոր կ'ընդունի: Զենց գիտեր իրեն ամէն կընակիցներն

ալ հաւան են այս մասին։ Լուսաւորիչ, պաշտ զարերու մէջ կ'ապրի։ գեռ չէ ըրբոնած թէ հինցած, մաշած բաներ են լուսաւորիչ, ներսէս, Սահակ, և թէ ծագեր է լուտեր՝ ճշմարտութեան և արդարութեան արեգակն՝ իր արբանեավներով։ Հայ եկեղեցին դեռ առասպելաբան, ցնորական, անիմաստ շարականներ է որ կ'երգէ։ և իր տաճարներուն մէջ չի հիւրընկալեր այն գողար, հոգեթունն երգերը՝ զորս լուտեր և իրեն աշակերտները երկնային ներշնչմամբ յօրիներ են։ Էջմիածնի եկեղեցին հեթանոսութեամբ պատկերներու յարգութիւն կ'ընէ։ և չի զգար այն երկնային պաղութիւնը՝ զոր կը ներշնչէ բոռդղական զանհըր։ Գրիգոր, Աթանաս, Ռուկերան, Կիւրեղ շաղփազիեր են։ միայն Աւետարանական (այսինքն աւետարանը չընդունող) եկեղեցից «բանս կենաց յափտենականաց ունին»!..

Թայց մենց պիտի ըսենց որ Պ. Աստանական ի դիմաց բովանդակ Հայ բողոքականութեան ամենամեծ զովեստ մ'է որ կու տայ Հայ Եկեղեցւոյն՝ երր կ'ըսէ թէ ան «ոյ ծեսերեն ու արարութիւններեն, ոչ այ վարդապետուրիւններեն բան մը բարեփոխ է»։ Ուրեմն Պ. Աստանալեան իսկ կ'ընդունի որ այդ երկու եկեղեցիներուն մէջ անզունդ մը կայ։ կ'ընդունի որ ան թէպէտ խեռ՝ հարազատ որդի է իր Հարց, իրեն մէջ, իրեն ցով կ'ապրին դեռ լուսաւորիչ, Սահակ, Մեսրոպ, ներսէս, Վարդան, որոնցմով, միայն պիտի կարենայ պարծիւ, ջանալով միշտ մերձենալ պանծալի Հայրապետներու ուղոյն և գործունէութեան, և այսու վերակենդանացնել ոսկի դարերու կրօնական և հայրենասիւական փառքերը։

Տարրեր վարդապետութենէ և քարոզութենէ կը հետևի՝ որ Քրիստոսի և Լուտերի առաքելութիւնն ալ տարրեր ծագում ունին։ Քրիստոս՝ «ի Հօրէն լուսոյ», իսկ Լուտերը...։

Ահա ուրեմն բարեփոխութիւնը։

Թայց «Լուսաւորչական եկեղեցին» 101 տարի առաջանել դիրքին վրայ է. ոչ ծեսերեն ու արարութիւններեն, ոչ այ վարդապետութենն բան մը բարեփոխած է ո՛ կը սէ Պ. Աստանալեան։

Հայ Եկեղեցին ուրեմն կոյր, յետամաց է. զեռ չի զգար կենաց պատգամի քաղցրութիւնը՝ զոր իրեն կը բերեն Միովիթեւուն աւետարանիշները։ Հայ եկեղեցին դեռ խաւարային, մոլեռունդ, սնա-

Հ. Եղիս Փետական

